ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЬЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 54(3),2020 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 911.5/.9

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ օրինակով)

Տ. Ա.ՍԱՐԳՍՅԱՆ *

ԵՊՀ սերվիսի ամբիոն, Հայաստան

Հոդվածում առաջարկված են զբոսաշրջության համաչափ տարածքային զարգացման քաղաքականության՝ որպես ռեգիոնալ քաղաքականության առանձին ուղղության ընդհանուր տեսական դրույթները (օբյեկտներ, սուբյեկտներ, նպատակներ, մեթոդաբանություն, անհրաժեշտության հիմնավորում և այլն): Վերը նշված դրույթները տեղայնացվել են ՀՀ օրինակով՝ հիմնավորելով ՀՀ-ում զբոսաշրջության համաչափ տարածքային զարգացման պետական քաղաքականության արդի անհրաժեշտությունը:

https://doi.org/10.46991/PYSU:C/2020.54.3.211

***Keywords*:** tourism proportional territorial development, regional policy.

Ներածություն: Պետության համաչափ տարածքային զարգացման ապահովման «գործիքներից» է տարածքային կամ ռեգիոնալ քաղաքականությունը (ՌՔ): Առանձնացվում են դրա տնտեսական, էկոլոգիական, սոցիալական, ժողովրդագրական և այլ տեսակները:

Հաշվի առնելով արդի աշխարհում զբոսաշրջային ինդուստրիայի աճի բուռն տեմպերը, առաջ է գալիս տարածական առումով դրա զարգացման համակարգման և կարգավորման անհրաժեշտությունը: Ըստ այդմ, պետության համաչափ տարածքային զարգացման համատեքստում իր կայուն տեղը պետք է ունենա նաև զբոսաշրջության համաչափ տարածքային զարգացումը:

Զբոսաշրջության զարգացումն իրավամբ դասվում է ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղությունների թվին: Այս առումով առանցքային նշանակություն է ստանում երկրում ոլորտի կայուն և տարածականորեն համաչափ զարգացումը՝ առկա անհամամասնությունների համահարթեցումը, զբոսաշրջային ներուժի համակողմանի օգտագործումը, զարգացման տարածական ապակենտրոնացումը, ծրագրումը և այլն:

Տվյալ հոդվածում առաջարկվում է զբոսաշրջության համաչափ տարածքային զարգացման քաղաքականության (ԶՀՏԶՔ) նախնական տեսական հենք կամ շրջանակ՝ փորձելով դրա առանցքային դրույթները տեղայնացնել ՀՀ օրինակով:

* E-mail: tigran.sargsyan@ysu.am

Հետազոտության նյութերն ու հիմնական արդյունքները:

Ռեգիոնալ քաղաքականություն և զբոսաշրջության համաչափ տարածքային զարգացում. տեսական-մեթոդաբանական ասպեկտների վերլուծություն: Ըստ Ա.Չիստոբաևի և Յու.Գլադկիյի, ռեգիոնալ (ռեգիոնալ սոցիալ-տնտեսական) քաղաքականությունը գործունեության ոլորտ է՝ ուղղված տարածական-ռեգիոնալ առումով երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական, էկոլոգիական զարգացման կառավարմանն՝ ըստ մշակված ծրագրի, այսինքն՝ միտված է երկրի համաչափ տարածքային զարգացման ապահովմանը [1]:

ՌՔ օբյեկտներ կարող են համարվել տարբեր մակարդակի տարածքային միավորները, իսկ սուբյեկտ-իրականացնողներ՝ համապետական ու տարածքային իշխանության մարմինները, մասնագիտացված հաստատություններն ու կազմակերպությունները: Օբյեկտների ու սուբյեկտների առանձնացումը կախված է քաղաքականության տեսակից, նպատակներից, երկրի տարածքի մեծությունից ու գծագրությունից, բնական ու սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից, պետական կառավարման ձևից, վարչատարածքային կառուցվածքից և այլն:

Ըստ վերը նշվածի առաջարկում ենք ԶՀՏԶՔ՝ որպես ՌՔ առանձին ուղղության հետևյալ բնորոշումը. «Օրենսդրական, վարչական, կազմակերպչական, տնտեսական և այլ միջոցառումների համալիր՝ ուղղված երկրում տարածքային առումով զբոսաշրջաության զարգացման արդյունավետ ծրագրմանը, կառավարմանն ու կայուն զարգացմանը»: Ըստ էության, կիրառելի է նաև «ռեգիոնալ զբոսաշրջային քաղաքականություն» բնորոշումը:

ԶՀՏԶՔ օբյեկտները սահմանելիս խնդրահարույց է այն հանգամանքը, որ, որպես զբոսաշրջային ինդուստրիայի ծրագրման և զարգացման հենք, առաջարկվել են ամենատարբեր մակարդակի ու ընդգրկման տարածքային միավորներ՝ զբոսաշրջային կենտրոն, կլաստեր, գոտի (զոնա), վարչատարածքային ու վարչաքաղաքական բաժանման միավորներ: Ընդհանրացնելով, առաջարկում ենք օբյեկտների առանձնացման 2 սկզբունքային մոտեցում՝ հիերարխիկ ու մեթոդաբանական:

Հիերարխիկ առումով նպատակահարմար է կիրառել կետային ու արեալային աշխարհագրական միավորների համակարգը: Մասնավորապես, 1-ին՝ բարձր կարգի օբյեկտներ կարող են դիտվել արեալային (մակերեսային) այնպիսի տաքսոններ, ինչպիսիք են վարչատարածքային բաժանման միավորները (օրինակ, ՀՀ մարզերը): 2-րդ կարգի՝ կետային միավորների թվին կարող են դասվել զբոսաշրջային կենտրոնները (քաղաքային և գյուղական առանձին բնակավայրեր կամ համայքներ): 1-ին և 2-րդ կարգի միավորների միջև կարող են առանձնացվել զբոսաշրջային գոտիները (մարզերի հատվածներ, խոշորացված համայնքներ, գետահովիտներ և այլն):

Մեթոդաբանական տեսանկյունից, անկախ օբյեկտի կարգային մակարդակից ու բնույթից, անհրաժեշտ է կիրառել դեստինացիոն մոտեցումը՝ զբոսաշրջային այցելության վայրը, անկախ իր տարածական ընդգրկումից, հարկ է դիտարկել որպես զբոսաշրջային դեստինացիա:

Ընդհանրացնելով Ն. Լեյպերի, Օ. Նիկիտինայի, Ա. Զորինի և այլոց սահմանումները, զբոսաշրջային դեստինացիան բնորոշվում է որպես աշխարհագրական տարածք՝ իր բնական ու վարչական սահմաններով, որն իրենից ներկայացնում է խիտ կենտրոնացված զբոսաշրջային ռեսուրսների, ենթակառուցվածքների, մարդկանց (զբոսաշրջիկներ, տեղական բնակչություն

ու համայնքեր) փոխկապակցված ամբողջություն, և որն ընտրվում է զբոսաշրջիկի կողմից՝ այցելության նպատակով: Միաժամանակ, դեստինացիան համարվում է զբոսաշրջության ռեգիոնալ նախագծման տարածական հենք [2]: Ըստ այդմ, դեստինացիոն մոտեցումը զբոսաշրջության զարգացման գործընթացում համակարգային մոտեցման լավ օրինակ է՝ հիմնված զբոսաշրջային ռեսուրսների կայուն և նպատակային օգտագործման, տարածքի արդյունավետ զբոսաշրջային յուրացման, շահագրգիռ կողմերի առաջնահերթությունների ներդաշնակ համատեղման վրա:

ԶՀՏԶՔ սուբյեկտների թվին են դասվում զբոսաշրջության կազմակերպման ու զարգացման ոլորտում «որոշում կայացնողները»՝ կառավարման մարմինները, կառույցներն ու կազմակերպությունները (տարբեր մակարդակներում՝ համապետական, վարչատարածքային միավորների, տեղական), ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում կրթական, հետազոտական, մարքեթինգային, զարգացման ծրագրման և այլ գործառույթներ իրականացնող կազմակերպությունները: Այս առումով ուշագրավ է Գերմանիայի օրինակը. երկրում առանձնացվում են ոլորտի զարգացման և ռեգիոնալ համակարգման սուբյեկտների մակարդակներ.

- տնտեսության և տեխնոլոգիայի դաշնային նախարարություն՝ պատասխանատու է զբոսաշրջային քաղաքականության մշակման համար;
- 16 դաշնային միավորների (լանդերի)՝ զբոսաշրջության նախարարություններ;
- զբոսաշրջության դաշնային (լանդերի) կոմիտե՝ համակարգում է վերը նշված 16 նախարարությունների աշխատանքը, տեղեկատվության փոխանակությունը;
- 16 դաշնային միավորների զբոսաշրջային մարքեթինգային կազմակերպություններ;
- Գերմանիայի ազգային զբոսաշրջային խորհուրդ. պատասխանատու է արտերկրում Գերմանիայի՝ որպես զբոսաշրջային դեստինացիայի մարքեթինգի համար: Համագործակցում է վերը նշված 16 մարքեթինգային կազմակերպությունների հետ [3]:

Որպես ԶՀՏԶՔ հիմնական մեթոդաբանական մոտեցումներ, առաջարկվում են.

1. *Տարածականություն*: Հանդիսանալով աշխարհագրական գիտության հիմնարար մեթոդաբանական մոտեցումը, ՌՔ ցանկացած ուղղության պարագայում ևս տարածական մոտեցումն առանցքային նշանակություն ունի: Մասնավորապես, երկրի զարգացման տարբեր ուղղությունների ծրագրումն ու կառավարումը տեղի է ունենում տարածական կտրվածքով՝ հաշվի առնելով զարգացման հնարավորությունների, հիմնախնդիրների և հեռանկարների տարածական տարբերություններն ու առանձնահատկությունները:

2. *Կայունություն*: Ի նպաստ արդյունավետության, ԶՀՏԶՔ-ն պետք է առավելագույնս հիմնված լինի կայուն զարգացման հիմնադրույթների վրա՝ տարածականորեն հաշվի առնելով և ներդաշնակորեն համատեղելով զբոսաշրջության զարգացման տնտեսական, սոցիալական, բնապահպանական և մշակութային առանձնահատկություններն ու, մեծ հաշվով, ապահովելով զբոսաշրջության կայուն տարածքային զարգացում:

3. *Համակարգայնություն*: Քաղաքականության արդյունավետ մշակման և իրականացման գրավականներից է զբոսաշրջության համաչափ տարածքային

զարգացումը որպես փոխկապակցված բաղադրիչների ամբողջական համակարգ դիտարկելը (հետազոտական, ծրագրման, իրականացման վերահսկողության և գնահատման գործընթացների, զբոսաշրջության զարգացման հնարավորությունների, հիմնախնդիրների և հեռանկարների, քաղաքականության օբյեկտների, սուբյեկտների և այլն):

Ինչպես որ ՌՔ տեսական դրույթներն իրենց կոնկրետ-գործառնական ձևակերպումներն են ստանում տարածքային զարգացման ծրագրերում, այնպես էլ ԶՀՏԶՔ հիմնադրույթները պետք է ամբողջանան զբոսաշրջության տարածքային զարգացման ծրագրերում: Վերջիններս պետք է դիտարկվեն որպես առանձին տարածքներում զբոսաշրջային քաղաքականության իրականացման կազմակերպչական-իրավական հենք: Ըստ այդմ, առաջարկվում է զբոսաշրջության ռեգիոնալ զարգացման ծրագրերի ընդհանուր կառուցվածքը (աղյ. 1):

Աղյուսակ 1

Զբոսաշրջության տարածքային զարգացման ծրագրերի կառուցվածքի առաջարկ

h/h	Բաժինները	Հիմնական կետերը-բաղադրիչները
1	Ընդհանուր՝ համապետական մակարդակ	• զբոսաշրջային ներուժի բնութագիրը, տարածական վերլուծություն; • երկրի զբոսաշրջային վիճակագրության ցուցանիշները; • զբոսաշրջային քաղաքականության ընդհանուր սկզբունքները, առաջնահերթությունները, թիրախային ուղղությունները, տարածքները; • զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն; • զարգացման ակնկալվող հիմնական աղյուսները (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ):
2	Կոնկրետ՝ տարածքի մակարդակ	• տարածքի ընդհանուր պատմաաշխարհագրական ակնարկ • բնական և պատմամշակութային զբոսաշրջային ռեսուրսները, համապատասխան դեստինացիաները և զբոսաշրջության տեսակները; • հիմնական քանակական-վիճակագրական զբոսաշրջային ցուցանիշները՝ այցելուների թիվը և դինամիկան, այցելությունների միջին տևողությունը, զբոսաշրջային ենթակառուցվածքի ցուցանիշները; • զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն՝ ինչպես ամբողջ տարածքի, այնպես էլ առանձին դեստինացիաների համար: Ըստ արդյունքների՝ բարելավման-շտկման, պահպանման ու զարգացման միջամտությունների հիմնական ուղղությունների ուրվագծում; • զբոսաշրջության զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակների ծրագրում՝ նշելով ենթանպատակներն ու քայլերը, ժամկետները, չափանիշները, պատասխանատուները, անհրաժեշտ ֆինանսական միջոցները, աղբյուրները, անհրաժեշտ ֆինանսատնտեսական, կազմակերպչական ու վարչական միջոցառումները; • զբոսաշրջության կայուն զարգացման մարտահրավերներ և լուծումներ; • ռեգիոնալ մարքեթինգային և բրենդինգային միջոցառումները; • զարգացման այլ ծրագրերին ինտեգրվելու հնարավորությունները:

Ամփոփելով, կարելի է առանձնացնել ԶՀՏԶՔ հիմնական նպատակները՝ առաջնորդվելով 2 հիմնական մոտեցումներով. համընդհանուր-պարտադիր և կոնկրետ-հասցեական:

Համընդհանուր-պարտադիր մոտեցման պարագայում ԶՀՏԶՔ-ն, որպես պետական կարգավորման միջոցառումների համալիր, պետք է ընդգրկի պետության ողջ տարածքը (հաշվի առնելով կոնկրետ տարածքային առանձնահատկությունները)՝ ներառելով հետևյալ նպատակները.

1) զբոսաշրջային կազմակերպությունների, ծառայությունների ու ենթակառուցվածքների առավել ռացիոնալ ու համաչափ տեղաբաշխում՝ ուղղված տարածական անհամամասնությունների կրճատմանն ու զբոսաշրջային ինդուստրիայի համաչափ տարածքային զարգացմանը;

2) տարածքների զբոսաշրջային հնարավորությունների ու ռեսուրսների բացահայտում և «գույքագրում»՝ ի նպաստ դրանց համակողմանի և նպատակային օգտագործման, հեռանկարային դեստինացիաների ներգրավման և զբոսաշրջության նոր տեսակների զարգացման;

3) տարածքային զբոսաշրջային մարքեթինգի իրականացում՝ դեստինացիաների զբոսաշրջային գրավչության և մրցունակության ապահովման նպատակով;

4) ԶՀՏԶՔ նպատակների ու վերջնարդյունքների ինտեգրումն ընդհանուր ռեգիոնալ-տարածքային սոցիալ-տնտեսական քաղաքականության համատեքստում;

5) զբոսաշրջության զարգացման տարածքային ծրագրերի մշակում;

6) զբոսաշրջության համաչափ տարածքային զարգացման բոլոր փուլերում և գործընթացներում կայուն զարգացման ու կայուն զբոսաշրջության սկզբունքների ներառում:

Հասցեականի դեպքում առանձնացվում են թիրախային (առավել առաջնահերթ) տարածքները: Այնուհետև դրանց նկատմամբ կիրառելի են համընդհանուր մոտեցման նպատակները:

ՀՀ ԶՀՏԶՔ անհրաժեշտության հիմնավորումը, առաջարկվող նպատակները և ուղությունները: ՀՀ-ում առկա են զբոսաշրջության զարգացման հնարավորությունների, հիմնախնդիրների ու առաջնահերթությունների ցայտուն արտահայտված տարածքային տարբերություններ և բազմազանություն: Ուստի, զբոսաշրջության արդյունավետ և կայուն զարգացումը պետք է հիմնված լինի նաև վերը նշված տարբերությունների ու դրանց ազդեցության գնահատման, զբոսաշրջության զարգացման՝ տարածականորեն տարբերակված մոտեցման վրա: Մինչդեռ, պետական մակարդակով ՀՀ-ում դեռևս մշակված չէ զբոսաշրջության տարածքային զարգացման սկզբունքների միասնական համակարգ: Առանձին դրույթներ ներկայացված են Զբոսաշրջության զարգացման հայեցակարգում և ծրագրերում (ըստ տարիների):

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի 2018 թ. տվյալների, միայն Երևանին է բաժին ընկնում ՀՀ-ում մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի շուրջ 81,7%-ը, կացության և հանրային սննդի ծառայությունների 84,3%-ը, մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների մոտ 81%-ը: Բացի այդ, Երևանում է գտնվում ՀՀ հյուրանոցային տնտեսության բոլոր օբյեկտների մոտ 60%-ը (հյուրանոցային տնտեսության օբյեկտների ընդհանուր հասույթի մոտ 81%-ով), որոնցում հանգրվանել է ներգնա զբոսաշրջիկների շուրջ 86,5%-ը [4]: Անգամ վերը նշված սահմանափակ վիճակագրական տվյալները մատնանշում են ՀՀ-ում զբոսաշրջության կազմակերպման ու զարգացման գործընթացների տարածական ապակենտրոնացման, զարգացման տարածական անհամամասնությունների շտկման, մարզային կարողությունների զարգացման անհրաժեշտությունը:

Բացի այդ, ի նպաստ ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման առավելագույն արդյունավետության, անհրաժեշտ են նպատակուղղված միջոցառումներ՝

տարբեր տարածքներում (և տարբեր սուբյեկտների կողմից) իրականացվող գործողությունների և միջոցառումների համակարգման և հետագա խթանման, մարզային զբոսաշրջային ռեսուրսների նպատակային գույքագրման, արդյունավետ օգտագործման ուղիների վերհանման, զբոսաշրջության համալիր և կայուն զարգացման մարզային ծրագրերի մշակման և կյանքի կոչման նպատակով:

Աղյուսակ 2

ՀՀ ԶՀՏԶՔ ուղղություններն ու նպատակները

h/h	Ուղղությունները	Նպատակները
1	Վերլուծություն և գնահատում	• Զբոսաշրջային ռեսուրսների նկարագրություն, օգտագործման արդի վիճակի, հիմնախնդիրների և հեռանկարների գնահատում; • զբոսաշրջության ու դրա առանձին տեսակների զարգացման մակարդակի, մասնագիտացման, առանձնահատկությունների, հիմնախնդիրների և հեռանկարների տարածքային վերլուծություն; • զբոսաշրջության նոր տեսակների առաջարկ և հիմնավորում՝ արդի պահանջարկի և ոլորտի զարգացման համաշխարհային միտումների վերլուծության հիման վրա:
2	Զարգացման ծրագրում և իրականացում	• Համապետական մակարդակով՝ ԶՀՏԶՔ սկզբունքների, դրույթների և առաջնահերթությունների որոշում; • ԶՀՏԶՔ տարածական հենքի (օբյեկտների համակարգ) հստակեցում, դեստինացիոն-համակարգային մոտեցման կիրառում, նոր դեստինացիաների ներգրավում և ոլորտի՝ տարածականորեն համաչափ զարգացման մոտեցումների մշակում; • ինստիտուցիոնալ բարելավում՝ սուբյեկտ-իրականացնողների շրջանակի որոշում, գործառույթների համակարգում, մարզային ու տեղական սուբյեկտների կարողությունների ավելացում; • զբոսաշրջության տարածքային զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրում. նպատակներ, ենթանպատակներ, կոնկրետ գործողություններ և վերջնարդյունքներ, դրանց գնահատման չափանիշներ, ժամանակացույց, պատասխանատուներ, անհրաժեշտ ու առկա ռեսուրսներ (օրինակ՝ նյութական, ֆինանսական, մարդկային), դրանց ներգրավման ուղիներ, վերահսկողության ու հետադարձ կապի մեխանիզմներ; • զբոսաշրջության զարգացման տարածքային ծրագրերի կազմում:
4	Տարածքային մարքեթինգ	ՀՀ զբոսաշրջային դեստինացիաների բրենդինգ, գրավչության և նպաստավոր իմիջի ձևավորում՝ մրցակցային առավելությունների վերհանման և նպատակային առաջխաղացման, զբոսաշրջային մասնագիտացման առանձնահատկությունների հիման վրա:
5	Ինտեգրում	ՌՔ զբոսաշրջային, սոցիալական, բնապահպանական, ֆինանսատնտեսական և այլ տեսակների ներդաշնակ համադրում, զբոսաշրջության՝ որպես ՀՀ համաչափ տարածքային զարգացման գործոնի, դրա դերի ու նշանակության հստակ ամրագրում:

ՀՀ ԶՀՏԶՔ հնարավոր օբյեկտների՝ տարածքային միավորների վերաբերյալ որոշակի անդրադարձ է արվել Զբոսաշրջության զարգացման հայեցակարգում: Այսպես, 2020–2030 թթ. նախատեսված է ՀՀ-ում ձևավորել զբոսաշրջության զարգացման 3 հանգույց (Երևան, Դիլիջան, Եղեգնաձոր), որոնց շուրջ կձևավորվեն և կզարգանան զբոսաշրջային 10 կենտրոն (Էջմիածին, Ծաղկաձոր, Ջերմուկ, Արագած, Սևան, Գորիս, Գյումրի, Իջևան,

Ստեփանավան, Մեղրի)՝ զբոսաշրջային մասնագիտացման ուղղություններով [5]: Որոշակիորեն հետաքրքիր համարելով, այսպես կոչված, «օջախային» հանգույցների և դրանց շուրջ կենտրոնների ձևավորման գաղափարը, պետք է փաստել, որ այս մոտեցման դեպքում հիմնականում չեն պահպանվում տարածական հիերարխիայի՝ ենթակարգության, ամբողջականության և, առհասարակ, համակարգային մոտեցման սկզբունքները:

Հետևաբար, որպես 1-ին կարգի՝ արեալային օբյեկտներ, նպատակահարմար է դիտարկել ՀՀ վարչական մարզերը, որոնք համարվում են տարածքների համաչափ զարգացմանն ուղղված պետական սոցիալ-տնտեսական քաղաքականության օբյեկտներ՝ որպես պետական կառավարման համակարգի միավորներ: Մարզային կտրվածքով են ձևավորվում վիճակագրական տարատեսակ տվյալների բազաները. այս ամենն առանցքային նշանակություն ունի ինչպես պետական կարգավորման ցանկացած գործունեության, այնպես էլ զբոսաշրջության համաչափ տարածքային զարգացման ծրագրման և իրականացման առումով: Որպես 2-րդ կարգի՝ կետային օբյեկտներ կարող են հանդես գալ ինչպես քաղաքային (Երևան, Գյումրի, Սևան, Ջերմուկ, Վանաձոր, Դիլիջան, Ծաղկաձոր, Ստեփանավան, Վաղարշապատ, Գորիս և այլն), այնպես էլ գյուղական այն համայնքները և դրանց կազմում ներառված առանձին բնակավայրերը (Ենոքավան, Գառնի, Կալավան, Արզնի, Արենի, Տաթև և այլն), որոնք արդեն իսկ այս կամ այն չափով վերածվել են զբոսաշրջային այցելության վայրերի: Վերը նշվածները (մասնավորապես, քաղաքները) կարող են զբոսաշրջության զարգացման «միջուկի»՝ կազմակերպիչ կենտրոնի գործառույթներ կատարել հարակից բնակավայրերի համար:

Միջանկյալ մակարդակի՝ զբոսաշրջային գոտիների կարգավիճակ կարող են ունենալ, օրինակ՝ Գառնի–Գողթ–Գեղարդ, Սևան–Շորժա հատվածները, Սևանի թերակղզին, Դեբեդ, Արփա, Որոտան, Մարմարիկ, Աղստև գետերի հովիտները: Գոտիների սահմաններում զբոսաշրջային քաղաքականության իրականացման կարևոր «գործիք» կարող է համարվել միջհամայնքային համագործակցությունը: Համապատասխանաբար, ՀՀ ԶՀՏԶՔ սուբյեկտների՝ իրականացնողների համակարգը կարելի է ներկայացնել հետևյալ մակարդակներով.

1. *Համապետական՝* ՀՀ կառավարություն և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ (Էկոնոմիկայի նախարարություն, Զբոսաշրջության պետական կոմիտե և այլն):

2. *Մարզային՝* ՀՀ մարզպետարաններ (մասնավորապես, մարզպետարանների «Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության» բաժինը) և Երևանի քաղաքապետարան:

3. *Տեղական՝* ինքնակառավարման մարմինները (համայնքներ):

4. Այլ (պաշտոնական գործառույթներ չունեցող) շահառուներ՝ բնակչությունը, գիտակրթական, վերլուծական-պլանավորման, մշակութային, մարքեթինգային, բնապահպանական գործառույթներ իրականացնող կազմակերպություններն ու անհատները, բիզնես-հատվածը և այլն:

Վերադառնալով քննարկված դեստինացիոն մոտեցմանը, հարկ է ընդգծել ՀՀ-ում զբոսաշրջության համաչափ ու կայուն տարածքային զարգացման համատեքստում դրա կիրառման նպատակայնությունն ու

հիմնավորվածությունը՝ ինչպես մարզերի, այնպես էլ առավել ցածր կարգի տարածքային միավորների պարագայում: Մասնավորապես, զբոսաշրջային դեստինացիաների առանձնացումն ու դրանց համատեղ կառավարումը (ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառավարման օղակների գործառույթների համատեղումը կոնկրետ տարածքներում) կարող է դիտարկվել որպես կայուն զբոսաշրջության ապահովման միջոց [6]: Նոր դեստինացիաներ առանձնացնելիս անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել տվյալ տարածքում զբոսաշրջային ռեսուրսների, բնակչության, բնակավայրերի և աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխման առանձնահատկությունները, ենթակառուցվածքային ցանցի ու սպասարկման օբյեկտների առկայությունը. հատկապես ՀՀ լեռնային պայմաններում դեստինացիայի զարգացման կարևոր գրավական է տարածքի կոմպակտ բնույթն ու տարբեր տարածամասերի փոխադարձ մատչելիությունը, նպաստավոր աշխահագրական դիրքը, ռելիեֆային ու կլիմայական պայմանները, միջավայրի վրա մարդածին ծանրաբեռնվածության թույլատրելի արժեքների չխախտումը և այլն:

Ամփոփելով, ներկայացնենք ՀՀ ԶՀՏԶՔ առաջարկվող ուղղություններն ու համապատասխան նպատակները (աղյ. 2):

Եզրակացություն: Ըստ վերը նշվածի՝ ՀՀ-ում պետական մակարդակով ԶՀՏԶՔ մշակումն ու իրականացումը հրատապ և օրակարգային խնդիր է, որի լուծման համար պետք է ապահովել ՀՀ զբոսաշրջության ոլորտի համաչափ տարածքային զարգացումը, վերհանել ու նպատակային կերպով օգտագործել տարածքների զբոսաշրջային ներուժը, ձևավորել զբոսաշրջության տարածքային զարգացման կառավարման միասնական, գործուն ու ապակենտրոնացված համակարգ՝ ինչպես պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ շահագրգիռ տարբեր կողմերի լայն ներգրավվածությամբ: Սա կնպաստի տեղական նախաձեռնությունների աշխուժացմանը, դրանց համակարգման և իրականացման մեխանիզմների ստեղծմանը: Հստակ ձևակերպում կստանա զբոսաշրջության զարգացման տարածքային հիերարխիկ համակարգը՝ առանձին համայնքներից մինչև ՀՀ ողջ տարածքը. դեստինացիոն-համակարգային մոտեցման հետ զուգակցման դեպքում բարենպաստ պայմաններ կստեղծվեն ՀՀ-ում զբոսաշրջության կայուն տարածքային զարգացման համար: Զուգահեռաբար, զբոսաշրջության զարգացման տարածքային ծրագրումը թույլ կտա ապահովել առավել կոնկրետ, հասցեական և տարածականորեն տարբերակված մոտեցում:

ԶՀՏԶՔ մշակման և իրականացման բոլոր փուլերում կարևոր է աշխարհագրության գիտագործնական ներուժի լիարժեք օգտագործումը՝ պայմանավորված, առաջին հերթին, աշխարհագրության՝ տարածական գիտություն հանդիսանալու հանգամանքով: Ըստ այդմ, աշխարհագետ-մասնագետներն ակտիվ դերակատարություն կարող են ունենալ զբոսաշրջության զարգացման տարածքային վերլուծության, ծրագրման և կանխատեսման, դեստինացիաների առանձնացման և հիմնավորման աշխատանքներում:

Ստացվել է՝ 29.09.2020
Գրախոսվել է՝ 09.11.2020
Հաստատվել է՝ 10.12.2020

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гладкий Ю.Н., Чистобаев А.И. *Основы региональной политики*. С-Пб., Изд-во Михайлова В.А. (1998), 659 с.
2. Кирьянова Л.Г. Туристская дестинация как комплексный концепт и ключевой элемент туристской системы. *Вестник КемГУ* **1** : 4(52) (2012), 131–136. Հասանելի է 01.08.2020: https://tourlib.net/statti_tourism/kiryanova2.htm
3. *OECD Tourism Trends and Policies 2014. Germany*. OECD Publishing (2014). http://dx.doi.org/10.1787/tour-2014-18-en
4. *ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2014–2018, վիճակագրական ժողովածու*: Եր. (2019). Հասանելի է 01.08.2020: https://www.armstat.am/am/?nid=80&id=2203
5. Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ: Հասանելի է 01.08.2020. www.mineconomy.am/media/2081/1454.pdf
6. Սուվարյան Ս.Ռ. *Կայուն զբոսաշրջությունը որպես անհրաժեշտություն ՀՀ-ում: Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները*. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր: Եր. (2018), 380–383.

Т. А. САРГСЯН

СУТЬ И НЕОБХОДИМОСТЬ ПРОПОРЦИОНАЛЬНОЙ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ПОЛИТИКИ РАЗВИТИЯ ТУРИЗМА (на примере РА)

Резюме

В статье предлагаются общие теоретические положения политики пропорционального территориального развития туризма как отдельного направления региональной политики (объекты, субъекты, цели, методология, обоснование необходимости и др.). Вышеуказанные положения были локализованы на примере республики Армения с целью обоснования необходимости проведения государственной политики пропорционального территориального развития туризма в Армении.

T. A. SARGSYAN

TOURISM PROPORTIONAL TERRITORIAL DEVELOPMENT POLICY ESSENCE AND NECESSITY (on the example of RA)

Summary

The article proposes general theoretical provisions of the policy of proportional territorial development of tourism as a separate direction of regional policy (objects, subjects, goals, methodology, justification of the necessity, etc.). The aforementioned provisions were localized on the example of the Republic of Armenia, substantiating the urgent need for a state policy of proportional territorial development of tourism in Armenia.